ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2013թ. թիվ 260-Ա

Ս.ՃԱՂԱՐՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ
ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մայիսի 6-ի N 575-Ն որոշումը՝

Որոշում եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Վ.Համբարձումյանի անվան N 25 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սիլվարդ Ճաղարյանին վերանշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Վ.Համբարձումյանի անվան N 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն:

2. Ս.Ճաղարյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել փոփոխություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. նոյեմբերի 5
ք.Վանաձոր